ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԹ & ԻՆՎԵՍՏՄԵՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հաստատված է նոր խմբագրությամբ՝
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության
21.11.2019թ. թիվ 83-Լ որոշմամբ
Ուժի մեջ է՝ 01.12.2019թ.-ից

ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ _____

քաղաք Երևան, _____ _____ի երկու հազար _____ թվական

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վ.Սարգսյան 10, ՀՎՀՀ՝ 02574955, Թ/Հ՝ 103002102509, ՀՀ ԿԲ, էլ. հասցե՝ info@armswissbank.am, կայքէջ՝ www.armswissbank.am, հեռախոս՝ (+374)-60-757-000, (+374)-11-757-000), այսուհետ՝ «**Բանկ**», ի դեմս Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանի, ով գործում է համաձայն Բանկի կանոնադրության, մի կողմից, և

քաղաքացի _____ (անձը հաստատող փաստաթուղթ. անձնագիր՝ _____, տրված՝ __.__.____, _____-ի կողմից, հաշվառման և մշտական բնակության հասցե՝ _____, Բ/Հ՝ _____, էլ. հասցե՝ _____@_____._____, հեռախոս՝ _____), այսուհետ՝ «**Ավանդատու**», մյուս կողմից,

միասին անվանվելով «**Կողմեր**», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով Բանկն ընդունում է Ավանդատուից ստացված դրամական միջոցները (այսուհետ՝ «Ավանդ»), և պարտավորվում է Ավանդատուին վերադարձնել Ավանդի գումարը, ինչպես նաև սույն պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանից:

1.2. Ավանդատուն Բանկում ներդնում է ժամկետային Ավանդ՝ հետևյալ պայմաններով.

Ավանդի տեսակը	*ՍՏԱՆԴԱՐՏ*
Ավանդի գումարը և արժույթը	*_____(_____) ՀՀ դրամ*
Ավանդի գումարի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը	*__.__%*
Ավանդի ներդրման ժամկետը	*____ օրացուցային օր*
Ավանդը վերադարձնելու վերջնաժամկետը	*__.__.____թ.*
Հավելագրված տոկոսագումարի վճարումը	*ժամկետի վերջում*

1.3. Բանկի կողմից հավելագրված տոկոսագումարները վճարվում են.
- Ավանդի արժույթով, կամ
- ՀՀ դրամով՝ վճարման պահին Բանկի կողմից տվյալ արժույթի համար հայտարարված առքի փոխարժեքով:

1.4. Ավանդը վերադարձնելու վերջնաժամկետի օրը՝
- Բանկն Ավանդը վերադարձնում է Ավանդատուին՝ այն փոխանցելով Ավանդատուի ընթացիկ հաշվին, կամ
- սույն պայմանագրի գործողության ու Ավանդը վերադարձնելու ժամկետները համարվում են երկարաձգված՝ սույն պայմանագրի 1.2. կետի աղյուսակում նշված օրացուցային օրերի նույն չափով: Այս դեպքում, սույն պայմանագրով սահմանված կարգով, Ավանդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը սահմանվում է՝ Ավանդը երկարաձգելու օրը գործող, տվյալ ավանդատեսակի համար Բանկի կողմից հաստատված տարեկան տոկոսադրույքի չափով: Սույն պայմանագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

1.5. Ավանդի նկատմամբ տոկոսները հավելագրվում են Ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

1.6. Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է Ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, սույն պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ:

1.7. Եթե Ավանդի տեսակը Ստանդարտ կամ Փոփոխական է, ապա Ավանդի նկատմամբ հավելագրված տոկոսագումարի դիմաց Բանկը տոկոսներ չի հավելագրում:

1.8. Եթե Ավանդի տեսակը Կուտակային է, ապա Ավանդի նկատմամբ հավելագրված տոկոսագումարները յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրն ավելանում են Ավանդի գումարին, որի նկատմամբ ևս հավելագրվում են տոկոսներ՝ սույն պայմանագրի 1.2. կետի աղյուսակում նշված տոկոսադրույքի չափով:

1.9. Հավելագրված տոկոսագումարների վճարումը, կախված Ավանդի տեսակից, կատարվում է Ավանդի ժամկետի վերջին կամ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը, անկանխիկ՝ Բանկում Ավանդատուի համապատասխան բանկային հաշվին մուտքագրելու միջոցով:

1.10. Եթե վճարման օրը սահմանվում է ոչ աշխատանքային օր, ապա վճարումը կատարվում է վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

1.11. Ավանդի գումարը համարվում է Ավանդատուին հետ վերադարձված, իսկ հավելագրված տոկոսագումարներն Ավանդատուին վճարված՝ գումարներն անկանխիկ եղանակով Բանկում Ավանդատուի համապատասխան բանկային հաշվին մուտքագրվելու պահից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Բանկն իրավունք ունի՝**

2.1.1. Մինչև Ավանդի վերադարձն ինքնուրույնաբար տնօրինել Ավանդի գումարը:

2.1.2. Ավանդատուի պահանջով ժամկետից շուտ Ավանդը վերադարձնելու դեպքում, կատարել վերահաշվարկ՝ Ավանդի գումարից գանձելով արդեն իսկ վճարված տոկոսագումարները, և վճարելով տվյալ պահին գործող և Բանկի կայքէջում հրապարակված՝ Ավանդի արժույթով ցպահանջ ավանդատեսակի համար Բանկի կողմից հաստատված տարեկան տոկոսադրույքին համապատասխան չափով հավելագրված տոկոսագումար, եթե Կողմերի միջև այլ համաձայնություն ձեռք չի բերվել:

2.2. **Բանկը պարտավոր է՝**

2.2.1. Ոչ ուշ, քան Ավանդի հաշվի վրա Ավանդի գումարի մուտքագրման օրը ավանդատուին տրամադրել ավանդի հաշվից քաղվածք:

2.2.2. Սույն պայմանագրի ժամկետի ավարտից հետո Ավանդի գումարը և տոկոսագումարը մուտքագրել Ավանդատուի անունով Բանկում բացված բանկային հաշվին:

2.2.3. Ապահովել Ավանդի վերադարձն Ավանդատուի առաջին իսկ պահանջով՝ սույն պայմանագրի 2.1.2. կետով սահմանված պայմաններով:

2.2.4. Ավանդատուի կողմից տրված հանձնարարականի հիման վրա ապահովել Փոփոխական տեսակի Ավանդի մասնակի վերադարձը մինչև Ավանդի սկզբնական գումարի 50 (հիսուն) տոկոսի չափով՝ Ավանդատուի առաջին իսկ պահանջով, չկիրառելով սույն պայմանագրի 2.1.2. կետով սահմանված պայմանները:

2.2.5. Փոփոխական տեսակի Ավանդի գործողության ընթացքում ապահովել Ավանդատուի կողմից Ավանդի գումարի ավելացումը՝ համապատասխան գումարի ավելացման վերաբերյալ Ավանդատուի կողմից տրված հանձնարարականի հիման վրա: Ավանդի գումարի ավելացման արդյունքում Ավանդի հանրագումարը չի կարող գերազանցել սկզբնական Ավանդի գումարը:

2.2.6. Ապահովել Ավանդատուի ավանդային գործառնությունների գաղտնիությունը՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

2.3. **Ավանդատուն իրավունք ունի՝**

2.3.1. Բանկից պահանջել՝ վերադարձնել Ավանդի գումարը և վճարել Ավանդի գումարից տոկոսներ՝ սույն պայմանագրով սահմանված չափերով և պայմաններով:

2.3.2. Բանկում ներդրված դրամական միջոցների գրավով ստանալ վարկ, որի պայմանները սահմանվում են Բանկի կողմից:

2.3.3. Սույն պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ հետ ստանալ Ավանդը սույն պայմանագրով սահմանված կարգով ու պայմաններով:

2.3.4. Դիմել Բանկին՝ սույն պայմանագրով սահմանված կարգով Ավանդի չափն ավելացնելու կամ նվազեցնելու խնդրանքով:

2.3.5. Սույն պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին:

2.4. **Ավանդատուն պարտավոր է՝** սույն պայմանագրի իր օրինակը կորցնելու դեպքում այդ մասին անհապաղ տեղյակ պահել Բանկին:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2. Բանկը հանդիսանալով հարկային գործակալ, Ավանդատուի հարկային պարտավորությունները կատարելու նպատակով, Ավանդատուին վճարվելիք տոկոսագումարներից իրականացնում է գանձում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

3.3. Ավանդի վերադարձն ապահովված է Բանկին սեփականության իրավունքով պատկանող գույքով:

3.4. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կամ վաղաժամկետ լուծվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերով կամ Կողմերի գրավոր համաձայնությամբ:

3.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.6. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐ

ԲԱՆԿ	**ԱՎԱՆԴԱՏՈՒ**
_____ Գևորգ Մաչանյան	_____ _____
	ստորագրություն անուն, ազգանուն